



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ՈՒԽՏԻ ՕՐ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԵՋ Ս. ՊԱՏԱՐԱԳ, ՁԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԵՔ

Շաբաթ, Մարտ 28-ը Սուրբ Գրիգոր Լուսավորիչի տօնն է, միաժամանակ Սան Ֆրանսիսքոյի մեր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը: Այս առիթով, Սան Ֆրանսիսքոյի ծխական մեր համայնքը պիտի ապրի տօնական մթնոլորտ մը: Արդարեւ, տօնական այս առիթով, Սան Ֆրանսիսքոյի ծխական համայնքին այցելութիւն պիտի տայ Առաջնորդ Սրբազանը՝ Բարձ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի ու Ազգ. Վարչութեան անդամներու, շրջանի հայութեան հետ տօնելու համար մեր հաւատոյ հայր Ս. Գրիգոր Լուսավորիչի նուիրուած օրը:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան անդամները Սան Ֆրանսիսքո պիտի հասնին Շաբաթ, 28 Մարտ երեկոյեան: Առաջին հերթին, անոնք խորհրդակցական հանդիպում մը պիտի ունենան Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան ու ժողովականութեան ներկայացուցիչներուն հետ, քննարկելու համար ծխական համայնքը յուզող հարցեր:

Առաջնորդ Սրբազանը Կիրակի, Մարտ 29-ին, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ հաւատացեալներուն: Ս. Խորանին պիտի սպասարկեն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Աւետիս Զինյ. Թորոսեան:

Ս. Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազանը դպրութեան եւ ուրարակրութեան կարգեր պիտի շնորհէ Ս. Խորանին ծառայողներուն:

Ս. Պատարագի ավարտին, եկեղեցւոյ բոլոր նկշեցեալ բարերարներուն եւ նուիրեալ ծառայողներուն հոգիներուն համար տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, որմէ ետք պիտի կատարուի մատաղօրհնէքի արարողութիւն:

Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Յօր, կէսօրէ ետք ժամը 2:30-ին, կազմակերպուած է եկեղեցւոյ տարեկան ճաշկերոյթը, հիւրընկալութեամբ՝ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Սեդա Գիգիրեաններու: Ձեռնարկը կազմակերպուած է եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ եւ տեղի պիտի ունենայ Խաչատուրեան Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ:

DIVINE LITURGY, ORDINATIONS, AND BLESSING OF MADAGH ON THE NAME DAY OF ST. GREGORY CHURCH

Saturday, March 28th, is the Feast of St. Gregory the Illuminator's Descent into the Pit, which is also the name day of St. Gregory Church in San Francisco.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by Very Rev. Fr. Barthev Gulumian, and Executive Council members, will pay a visit to the San Francisco parish and celebrate this occasion with the community.

The Prelate and Executive Council members will arrive in San Francisco on Saturday, March 28th, and will meet with the Pastor and Board of Trustees to discuss issues concerning the parish.

On Sunday, March 29th, the Prelate will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Gregory Church. The Prelate will also ordain acolytes and stole bearers during the service. Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Avedis Torossian will assist at the altar.

Following Divine Liturgy, the Prelate will preside over requiem services for departed servants of the church, and the blessing of *madagh*.

The Prelate will also preside over the annual banquet of the parish which will take place following services at the Saroyan Hall of the Khachaturian Armenian Community Center.

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՉՈՅԵՐՈՒ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ ԲԱՅՈՒՄ ՍՈՆՈՄԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Նախաձեռնությամբ Հիւսիսային Քալիֆորնիոյ շրջանի Սոնոմա Համալսարանին, Կիրակի, 29 Մարտին, Կ.Ե. ժամը 3-ին, համալսարանի համալիրին մէջ, պիտի կատարուի ցեղասպանութեան զոհերու յուշակոթողի մը գետեղման պաշտօնական հանդիսութիւնը:

Յուշարձանը նուիրուած է ցեղասպանութեան զոհ գացած ժողովուրդներու, որոնց շարքին հայ զոհերու յիշատակին:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգշ. Ս. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան ներկայ պիտի ըլլայ յուշակոթողի բացման արարողութեան եւ պիտի կատարէ օրհնութեան աղօթքը:

PRELATE TO BE REPRESENTED AT THE OPENING OF THE SONOMA STATE UNIVERSITY GENOCIDE MEMORIAL

The Center for the Study of the Holocaust and Genocide and the Alliance for the Study of the Holocaust at Sonoma State University has initiated a project to construct a multi-genocidal monument on campus to honor the millions of lives lost in all the genocides throughout the world.

The opening ceremony of the Holocaust and Genocide Memorial Grove will take place on the afternoon of Sunday, March 29th, with the participation of religious and community leaders from various genocide groups.

Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate and will participate in the invocation.

THE BLUE HOUR ԺԱՊԱԼԵՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Կիրակի, Մարտ 29-ի երեկոյեան, կազմակերպութեամբ Համազգային Փասատիւնայի «Շահան Շահնուր» մասնաճիւղին, գրող եւ բեմադրիչ Էրիք Նազարեանի միջազգային ճանաչում գտած *The Blue Hour* տեսասկաւառակի հրապարակման առիթով, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Փասատիւնայի Հայ Կեդրոնին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքը:

DVD RELEASE OF *THE BLUE HOUR*

The DVD Release of Eric Nazarian's acclaimed film *The Blue Hour* will take place at the Pasadena Armenian Center on the evening of Sunday, March 29th.

The event is being held under the auspices of the Hamazkayin Western Region Regional Executive and is organized by the Hamazkayin Pasadena "Shahan Shahnour" chapter.

Rev. Fr. Khoren Babochian will deliver the invocation and convey the Prelate's blessings.

ՉՈՐՔ ՄԱՐԶՊԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Չորք-Մարզպանի (Տօրթ-Եոլ) Հայրենակցական Միութեան Լոս Անճելըսի շրջանի վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, Մարտ 29-ին, կ.ե. ժամը 5-ին, Պըրպէնքի «Գալայճեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Չորք Մարզպանի հերոսամարտի 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւն մը:

Ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնը Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի Հիւպատոսութեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հոր, ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Քինյ. Վասիլեան եւ պիտի ներկայացնէ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կոնդակը:

CENTENNIAL CELEBRATION OF CHORK MARZBAN/DORT YOL RESISTANCE

The 100th anniversary celebration of the Chork Marzban/Deurt Yeol armed resistance will take place on Sunday, March 29th, at “Kalaydjian” Hall in Burbank.

The event is being held under the auspices of the Consulate General of Armenia in Los Angeles and is organized by the Chork Marzban/Deurt Yeol Compatriotic Union.

Archpriest Fr. Vicken Vassilian will represent the Prelate and will present the encyclical of H.H. Catholicos Aram I.

ՍՄԿԱԿԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՄԱՆՑ ՀԻՄՆԱՐԿԻ 35-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՁԵՌՆԱՐԿ

UCLA համալսարանի Հայագիտական Ուսմանց Ընկերակցութեան հիմնադրութեան 35-ամեակին առիթով, Մարտ 26-28ին, գիտաժողով մը կազմակերպուած է, որ տեղի պիտի ունենայ համալսարանին մէջ, «Հայագիտութիւնը նոր ժամանակներու սեմին» թեմայով:

Գիտաժողովին եզրափակիչ հանդիսութիւնը պիտի կատարուի ճաշկերոյթով, որ տեղի պիտի ունենայ Մարտ 28-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հոլիվուտի «Տաղլեան» սրահին մէջ:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, յանուն Առաջնորդ Սրբազան Հոր, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, պիտի կատարէ սեղանի օրհնութիւնը եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հոր գնահատանքի եւ օրհնութեան խօսքը:

35TH ANNIVERSARY OF THE UCLA SOCIETY FOR ARMENIAN STUDIES

The UCLA Society for Armenian Studies has organized a three-day conference which will convene on Thursday, March 26th and conclude with the 35th anniversary gala banquet on Saturday, March 28th, at “Taglyan” Hall in Hollywood. 35th

The theme of the conference is “Armenian Studies at a Threshold”.

H.E. Archbishop Yeprem Tabakian will attend on behalf of the Prelate. He will deliver the invocation and convey the Prelate’s blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵՑ Ս. ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՅՑ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 22 Մարտ, 2009-ին, Սրբոց Քառասնից Մանկանց տոնին եւ Օրէնճ Քաունթիի մեր եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով, թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Սուրբ Պատարագ մատոյց եւ իր հոգեշունչ պատգամը փոխանցեց եկեղեցւոյ մէջ համախմբուած հաւատացեալ բազմութեան:

Պատարագիչ Սրբազան Զօր առընթերակայ էին Զրիստոնեական Դաստիարակութեան վարիչներէն՝ Զոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Զրանդ Զինյ. Երեցեան:

Ս. Խորանին սպասարկեցին եկեղեցւոյս սարկաւազները եւ թեմիս եկեղեցիներէն ժամանած երիտասարդաց խմբակի անդամներ:

Նախ քան իր քարոզը, Սրբազան Զայրը գոհութիւն եւ փառք յայտնեց Աստուծոյ, որ անգամ մը եւս կը գտնուի Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ համայնքին հետ, հրաւիրելով բոլորը աղօթելու աշխարհի խաղաղութեան եւ մարդկային կեանքի ապահովման ու երջանկութեան համար:



Առաջնորդ Սրբազանը քարոզի իբրեւ բնաբան ընտրած էր Ս. Քառասնից Մանկանց Նուիրուած շարականի հետեւեալ բառերը.- *«Այսօր կը տօնենք յիշատակը քաջ եւ յաղթող վկաներուն, որոնք Սեբաստիոյ մէջ արիաբար դիմադրելով հերքեցին անօրէն կռապաշտութեանց մոլութիւնը, բարեպաշտութեամբ Քեզ*

դաւանելով՝ միասնական Սուրբ Երրորդութիւն: Օրհնեալ ես մեր հայրերուն Տէր Աստուած»: Սրբազանը յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ այն խոր հաւատքին, որով ապրեցան 4-րդ դարուն իրենց հաւատքին մէջ անպարտելի եւ Աստուծոյ հանդէպ հաւատարիմ եղող քառասուն երիտասարդները՝ հաւատքի մեծ ախոյանները, որոնք Սեբաստիոյ Լիւսիաս հազարապետին հրամանով եւ օրուան դատաւոր՝ Ակրիկոզայիոսի որոշումով նահատակուեցան Սեբաստիոյ լիճին մէջ: «Քառասուն նահատակներուն նման, մենք եւս կոչուած ենք հաւատքի մեր կեանքը ապրելու, աղօթքի ճամբով միշտ Աստուծոյ հետ հաւատարմութեամբ քալելու, մեր ուխտը վերանորոգելու եւ սրբակենցաղ ապրելակերպով մեր կեանքը շարունակելու», յորդորեց Առաջնորդ Սրբազանը:

Ապա նաեւ յիշեցուց, թէ Մեծ Պահոց շրջանի հինգերորդ այս կիրակին կոչուած է «Դատաւորի Կիրակի»: Անոր ճամբով մեզի հասնող պատգամը կը թելադրէ, որ միշտ եւ առանց վիատելու աղօթենք: Զրիստոնէայի մեր կեանքին մէջ անհրաժեշտ է որ աղօթքը դառնայ ազդու միջոց մեզ բոլորս սրբագրելու, զօրացնելու, մաքրելու, սրբելու, մեզ հոգեպէս Աստուծոյ հետ հարազատ կապուածութեան մէջ պահելու եւ մեր բոլոր խնդրանքներն ու բարի ցանկութիւնները իր կամքին յանձնելու, յոյսով սպասելու անոնց արդար լուծումին:

Յաւարտ Ս. Պատարագին, հոգեհանգստեան արարողութենէն ետք, Սրբազան Զայրը, շրջապատուած առընթերակայ հոգեւորականներով եւ դպրաց դասով՝ առաջնորդուեցաւ «Ղուկասեան» սրահ, ուր կատարեց օրհնութիւնը եկեղեցւոյս անուանակոչութեան առթիւ պատրաստուած մատաղին, պատրաստուած՝ Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ:

Արարողութեանց աւարտին, ուխտաւոր հաւատացեալներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Ծաշի ընթացքին՝ խօսք առաւ եկեղեցւոյ Զովիւ՝ Արժ. Տ. Զրանդ Զինյ. Երեցեան, որ այս առթիւ յանուն Ս. Զառասնից Մանկանց Եկեղեցւոյ մեծ ընտանիքին, բարի գալուստ մաղթեց բոլորին, շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Զօր որ իր օրհնաբեր այցելութեամբ եւ օրուան Ս. Պատարագի մատուցումով իր սիրոյն արժանացուց եւ խրախուսեց բոլորը, Զոգեշնորի Զայր Պարթեւին, որ այս առթիւ ընկերակցելով Սրբազան Զօր, սպասարկեց Ս. Սեղանին: Ան ողջունեց նաեւ Ազգ. Վարչութեան Ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեանն ու վարչութեան անդամ Տիար Խաչիկ Երեցեանն ու իր ազնիւ տիկինը, որոնք իրենց ներկայութեամբ պատուեցին ծխական այս շրջանը:

Ապա Սրբազան Զայրը իր գնահատանքը յայտնեց եկեղեցւոյ մեծ ընտանիքին, եւ յատուկ կերպով գնահատեց եկեղեցւոյ Տիկնանց Միութեան վարչութիւնը եւ անդամները, նաեւ՝ Թեմիս Երիտասարդաց խմբակի անդամները, որոնք հեռակայ շրջաններէն եկած էին ու մասնակից դարձած Զառասուն Մանկանց տօնին: Եւ խրախուսեց բոլորը, որ անսան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Զայրապետի կոչին, որով 2009 թուականը հռչակած է «Երիտասարդութեան Տարի», որպէսզի բոլորը համախմբուին Եկեղեցւոյ եւ Ազգին շուրջ, ու զարկ տան իրենց մէջ հոգեւոր եւ ազգային ապրումներու առաւել կենսաւորումին, ու յառաջ տանին մեր բոլոր աշխատանքները՝ ի սպաս Օրէնճ Զառնութի գաղութի առաւել ծաղկումին:

Պահպանիչ աղօթքով վերջ գտաւ արարողութիւնն ու սիրոյ ճաշը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH

On Sunday, March 22nd, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian celebrated Divine Liturgy, delivered the sermon, and blessed *madagh* at Forty Martyrs Church in Orange County in commemoration of the Feast of the Forty Martyrs, which is also the name day of the church.

Assisting at the altar were Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Hrant Yeretzian. Deacons and members of the ACYA served at the altar.

Prior to delivering the sermon, the Prelate thanked God for granting the opportunity to once again gather in celebration of the name day of the church, and invited the congregation to join in prayer for peace and the wellbeing of all mankind.

The theme of the sermon was the deep and unyielding faith of the forty youth of Sebastia who stood firm in their loyalty to God and were martyred for their faith in the year 316, thus becoming champions of the Christian faith. The Prelate exalted the strength and courage of the youth who were subjected to every imaginable torture and temptation yet refused to renounce their faith and convert to paganism. The Prelate stated that “like the forty martyrs, we too are called to live our lives in faith, with devotion to God through prayer, and with virtue”.



The Prelate then focused his sermon on the message of the fifth Sunday of Lent, the Sunday of the Judge, which directs us to pray tirelessly. The Prelate concluded by saying “when we pray with sincerity and true faith, we are cleansed and led towards salvation. The forty martyrs were strengthened through prayer and they became heirs to the heavenly kingdom of God through their unwavering trust in God. We must remain steadfast in our prayers

and place our utmost trust in Him because he who endures through hardship will receive salvation”.

At the conclusion of Divine Liturgy and requiem services, the Prelate was led in a procession to “Gugasian” Hall where he blessed the *madagh*.

A reception followed the blessing of *madagh*. Rev. Fr. Hrant Yeretzian welcomed the guests and thanked the Prelate for conducting the inspiring services. He also thanked Very Rev. Fr. Barthev Gulumian, Executive Council Chair Dr. Garo Agopian and member Mr. Khatchig Yeretzian, and the youth who participated in the services.

In his message the Prelate commended all the servants of the church for their service and dedication to the progress of the parish and community.

The reception came to a close with the benediction by the Prelate.
